ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«16» Նոյեմբերի 2023թ. N ՄՈ/ 745 -Ա

ք. Արմավիր

ԱՄԱՏՈՒՆԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ «ՄԱՅԻՍՅԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 69-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2023 թվականի նոյեմբերի 16-ի զեկուցագիրը.

որոշում եմ

1. «Մայիսյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Աննա Սարուխանյանի բացակայության ընթացքում «Մայիսյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Մայիսյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Ամատունի Կիրակոսյանին՝ մինչև հիմքի վերացումը:
2. «Մայիսյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարման ընթացքում Ամատունի Կիրակոսյանի աշխատանավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 16.11.2023 17:39:03 GMT+4

Подписано: AVETISYAN ARNAK 2714860109

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ**